

ՀԱՏՎԱԾՆԵՐ ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓՄԱ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿՆԵՐԻՑ ԵՎ ԳԱՀԱԿԱՄՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՔԱՐՈՉՆԵՐԻՑ ՈՒ ԽՈՍՔԵՐԻՑ

Այս պահին փառք և գոհություն եմ ուզում առ Աստված բարձրացնել, որ արժանի դարձրեց ինձ այս մեծ շնորհին, Սրբագումար Ժողովի պարագամավորների վստահության քվեով կոչեց շարունակելու Հայոց Հայրապետների շարքը՝ որպես 132-րդ գահակալ Լուսավորչի Սրբազան Աթոռի: Ինքնամատուցումը անձիս այս գահին, խոնարհումը պարանոցիս Հայրապետական ծանր լուծին երբեք չի եղել այն զգացումով, թե ունեմ համապարասխան լիարժեք արժանիքներ, այլ եղել է հավաքքս և վստահությունս Աստուծո՞ զորակցության և օգնականության նկատմամբ, եղել է վստահությունս իմ ժողովրդի սիրո հանդեպ, սիրո հանդեպ դեպի Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին: Եղել է վստահությունս իմ առավել փորձառու հոգևոր եղբայրների նկատմամբ՝ ի գլուխ այնոցիկ հայոց նվիրապետական Աթոռների գահակալները՝ Մեծի Տանն Կիլիկիո միաբանությունը՝ Կաթողիկոս Արամ Ա Հայրապետով, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանությունը՝ Թորգոմ Սրբազան Պապրիարքով, Կոստանդնուպոլսո հայոց Պապրիարքությունը՝ իր եկեղեցականաց դասով՝ ի գլուխ Մեսրոպ Սրբազան Պապրիարքով, որոնց հետ եղբայրաբար, ծառայության ոգով, նվիրումով, հավաքքի գործերով պիտի գանք վերստին Հայոց Եկեղեցին հայու հոգում կերպելու, հաստատելու, զորացնելու և պայծառացնելու, որպեսզի Հայ Եկեղեցին՝ Լուսավորչի Աթոռը, դառնա օրհնություն մեր ողջ ժողովրդի համար ի Հայաստան և ի Սփյուռս աշխարհի:

Նոր հանգամանքի մեջ իմ անդրանիկ աղոթքն ուզում եմ բարձրացնել լուսահոգի Հայրապետների, առանձնապես Վազգեն Վեհափառ Հայրապետի և Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի համար, որոնց հոգեզավակն եմ եղել և որոնց նրախորընկալն եմ այսօր: Ես հավատում եմ, որ Հայոց Հայրապետների լույս հոգիները ուղեկից են լինելու ինձ գործունեությանս ողջ ընթացքին: Ու անսալու եմ նրանց խորհուրդներին, խոսելու եմ նրանց հետ, ստանալու եմ օրհնություն, ուղղություն մեր Եկեղեցու ղեկավարման, մեր հավաքացյալ ժողովրդի առաջնորդության ճանապարհին: Իմ աղոթքս ուզում եմ բարձրացնել նաև հանգուցյալ մորս հոգվույն համար, հորս համար, որ ապրում է, որովհետև աստվածճանաչողության, հոգևոր կյանքի առաջին սերմերը նրանք է, որ դրել են իմ հոգու մեջ՝ ճնրադիր առաջնորդելով ինձ դեպի այս Մուրբ Մեղանը Միաձնաէջ, որի առջև աղոթում էի մի «Հայր մեր», որ հայրս փակավիճն այսօր առ Աստված է բարձրացնում, ոչ այն, որ ինքս եմ սովորել, ինքս եմ աղոթում, այլ այն, որ իր սրտի ինքնաբերական խոսքն էր «Հայր մեր»-ի փառքերակով և որը որպես աղոթք ուսուցանել էր մեզ՝ Աստուծո հետ հարաբերվելու, Աստուծո հետ հաղորդակրթվելու, Աստուծո օրհնությունը հայցելու: Իմ աղոթքն առ Աստված ես ուզում եմ բարձրաց-

* Բոլոր կյուրերը վերցված են «Էջմիածին» ամսագրից:

նել մեր Եկեղեցու, Նվիրապետական մեր Աթոռների և մեր ողջ եկեղեցականության ու հավաքյալ ժողովրդի համար, որպեսզի Աստուծո ամենագոր հովանու ներքո ապրեն Հայոց խաղաղ-խաղաղ երկնքի փակ, իրենց արդար քրտինքով լծված շինարարական աշխատանքի՝ հայրենիքը շենացնելու, երկիրը գորացնելու և մեր բարօր, երջանիկ կյանքը կերտելու:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱԼՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԻՅ ՀԵՏՈ
ԻԶՄԱՆ Ս. ՍԵՂԱՆԻ ԱՌՋԵՎ ԱՍՎԱԾ ՈՒԽՏԻ ԽՈՍՔԻՑ

(27 հոկտեմբերի 1999 թ.)

1999, Ժ-ԺԱ, էջ 6-7

Լավապես եմ որպես Հայոց Հայրապետ: Հավաքում եմ մեր ժողովրդի սրելծարար ուժին, հանճարեղ մտքին ու կառուցող բազկին, հպարտ եմ նրա կենսահաստատու ոգով, գոհաբերելու, համբերելու, հաղթահարելու և հաղթելու կամքով, լի եմ մխիթարությամբ, քանզի նեղությունների ու հոգսերի մեջ լցված ենք հույսով, և ամուր է գալիքի հանդեպ մեր հավաքը՝ խարսխված աստվածային Միրույն, որ ոչ երբեք անկանի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՆԵՌՈՒՄՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ ՏՐՎԱԾ
ՏԱՐԵՄՈՒՏԻ ՊԱՏԳԱՄԻՑ

(31 դեկտեմբերի 1999 թ.)

2000, Ա, էջ 4

Առաջին փարին է, որ որպես Հայրապետ Հայոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Իջման Սուրբ Սեդանի առաջ, աղոթք եմ վերառաքում առ Տերն մեր և հավաքում եմ, որ մեկամայա ձեր աղոթքները, մեր հայցն ու խնդրվածքը կամար պիտի կապեն Նոր փարվա շեմին, որի միջով անցնող յուրաքանչյուր հայորդի պիտի սրբի, մաքրագործի իր զգացումները և, որպես բարի հասկություններով առկեցուն անձ, անհար և Աստուծո արարած, պիտի մուտք գործի Նոր փարուց ներս՝ բարի զգացումներով շաղախելու հոգու և մտքի, սրտի և ձեռքի իր բոլոր գործերն ու արարքները, որոնք պիտի շենացնեն հայրենիքը մեր, որոնք պիտի գորացնեն և՛ Եկեղեցին Հայոց, և՛ համայն հայ ժողովուրդն ի Սփյուռս աշխարհի: Նոր փարվա առաջին այս աղոթքը թող թև առնի և մուտք գործի յուրաքանչյուր հայ օջախից ու ընկալիքից ներս՝ լույսով ու ջերմությամբ լեցնելու հայոց հարկերը, որպեսզի Տիրոջ ողորմությունը, սերը և խաղաղությունը բնակություն հաստատեն՝ աղոթք, խաղաղություն և երջանկություն բերելով այդ հարկի փակ կայք և բնակություն հաստատված ժողովրդի գավակաց:

ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՏԱՐԵՄՈՒՏԻՆ ԱՍՎԱԾ ԽՈՍՔԻՑ

(1 հունվարի 2000 թ.)

2000, Ա, էջ 6

Աստուծոյ եւ սուրբ նախնեաց հետք հայոց համահաւաք հանդիպման խորախորհուրդ Միածնաւէջ Տաճարից խօսք «առեալ ի ձայն օրհնութեան հայրենի բարբառով»՝ Հայրապետ

տրական անդրանիկ Մեր Կոնդակն ենք յղում համայն ժողովրդեանն հայոց ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփիւռս:

Արարարի մաքուր հայեացքի դիմաց Եռագոյնի վեհալուսիւ նոր ծածանումով Հայոց Ոստանում վերստին պարմական յուսառար օրեր է ապրում Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Մայր Աթոռը՝ 1700-ամեայ յիշողութեամբ, աշխարհասփիւռ մեր ժողովրդին ի հոգեւորս միաւորելու նուիրական առաքելութեամբ:

Բեթեւեմեան կենարար աստղայոյսով վառ է Հայոց երկնքում Լուսաւորչի Կանթեղ, որ իր մշտադօթք լոյսով հորիզոնից հորիզոն կանչում է հայ հոգիները դէպի հայութեան հաւարքի օրրան՝ Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Եռուսադէմի Սուրբ Կրօնացի մէջ, Մարդեղացեալ Փրկչի Ծննդեան Այրում, Յարուցեալ Տիրոջ թափուր գերեզմանի լուսեխորան սրբարանում, եւ այսօր վերստին Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ ծառայութեան Մեր ուխտը նորոգած Աստուծոյ, ժողովրդիս ու Հայրենիքիս առաջ, Հայրապետական առաքելութեան Մեր ճանապարհն ենք սկսում Հայ Եկեղեցու Նուիրապետութեան Աթոռների Գահակալների, Թեմակալ Առաջնորդների եւ ծառայանուէր Քահանայից դասի հետ Բարձրեալն Աստուծոյ ողորմութեանն ու առաջնորդութեանը ապաւինած, քաջալեր եւ յուսադիր մեր ժողովրդի հաւարի նոր արթնութեամբ, անկախ մեր Հայրենիքի գոյութեամբ, Հայ Առաքելական Մայր Եկեղեցուն հայրենի պետութեան զօրակցութեամբ: Բիւր փառք Երկնաւորին, որ Հայաստանի անկախութեամբ ազատ գործունէութեան նոր հնարաւորութիւն պարգեւեց Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն իր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնով:

Քրիստոսի որդեգրեալներն ենք երկու հազար տարիներ ի վեր, սուրբ ընձիւղը՝ «խաղաղութեան անտարանիչների» ձեռքով հայրենի մեր հողում սերմանուած հունդերի: 1700 տարիներ առաջ երկնքի դռները բացուեցին Հայոց երկնակամարում: Նահապակների արեամբ սրբացեալ մեր երկրի սրբում Միածին Որդու աստուածային էջքով «եկն անանցանելի լոյսն առ առկայծելի ճրագն», ու Լուսաւորչի հաւարի հիմերի վրայ բարձրացաւ հրաշակերտ Տաճարը Սուրբ Էջմիածնի՝ ինքնութեան եւ գոյութեան խորհուրդը Թորգոմական տան, Հայկեան մեր զարմի: Յարութեան յաղթական հաւարքը դարձրած արարող զօրութիւն, աղօթաբոյր մարեան, ծաղկեցինք, գիտութեան կաճառ վանքեր հիմնեցինք, դարերի մէջ մեզ բաժին ընկած փշոտ ճանապարհներին երգ ու բառով, գոյն ու քարով երկնեցինք զարմանահրաշ մշակոյթը մեր: Արդար Արեգակի լոյս այգաբացի վստահութեամբ մեր իրաւունքը պաշտպանեցինք Աւարայրում, Մարդարապարտում, Արցախի նորօրեայ հերոսամարտում: Անտարանի կենսապարգև Խօսքին ապաւինած՝ եղեռն վերապրեցինք, անեղ երկրաշարժ:

Աշխարհասփիւռ մեր ժողովրդի համար ցեղասպանութեամբ սկսուած դարն աւարտում է արցախեան ազատամարտի յաղթական շնչով, հայրենի հողի փոքրիկ մի հատուածում Աստուծոյ շնորհով ու ողորմութեամբ, մեր արի կամքով հաստատուած նոր անկախութեամբ: Տասնամեայ մաքառումների, զոհողութիւնների ու թանկ կորուստների գնով իրականացել է դարաւոր մեր իղձը: Արդ, ինչպէ՛ս կարող ենք նահանջել ժամանակաւոր դժուարութիւնների առջեւ, ինքնակամ փրոտել ահագնացող մահաբեր արտազաղթին: Ինչպէ՛ս կարող ենք հեռանալ ազատութեան լոյսով արժեւորուած, անկախութեամբ զօրութիւն առնող

և կեանք պարզեցնող Նոդ-Նայրենիից, երբ դարերի մեջ բազմիցս հիմնիվեր վերաշինել ենք մեր պունը, որպէս փինիկ յառնել մոխիրներից: Արիանանք յոյսով ու հաւաքով, գօրեպնդունք վճռականութեամբ՝ մեր պարմութեան բեկումնային շրջադարձը ապրելու: Զինունք լաւարեսութեամբ, որ ի լրումն ժամանակաց, ի լրումն դարի՝ Աւեփարանի լոյսով սիրոյ, խաղաղութեան, արդարութեան ու հաշտութեան նոր առաւօտը է բացուելու աշխարհի վրայ, մեր Նայրենիքում:

Նայրական պարզամ ու կոչ ենք ուղղում մեր ժողովրդի բոլոր զաւակներին «հաւաքի բարի մարտը» մղելու և նորոգելու հոգիներում «սուրբ սրտից, բարի խղճմբանքից, անկեղծ հաւաքից» թխած Մէրը: Մէրը առ մեր հայրերի Աստուած, սէրը առ Նայրենիս, սէրը առ հաւաքի անսասան վէմ Նայ Առաքելական Սուրբ Եկեղեցին՝ մեր հոգու ծննդավայրն ու փապանը փրկութեան, մեր միութեան ակունքը և յարաբերութեան շնորհը մեզ: Երկիւղածութեամբ պահպանենք մեզ աւանդուած 2000-ամեայ սրբազան ժառանգութիւնը: Նոր ճանաչումով, նոր արժեւորմամբ, նոր ներշնչանքով կեանք դարձնենք՝ «զի ժամանակ է սկիզբն լինելոյ» հայոց նոր դարձի: Ազգային արդար իղձերի իրագործման ճանապարհին լինենք հիմնամուր կամուրջ՝ հայոց անցեալը, ներկան ու գալիքը կապող:

Տիրաւանդ սիրոյ ողջունի Նայրապելական հրաւեր և յորդոր ենք ուղղում մեր Մայր Եկեղեցու Նուիրապելութեան Աթոռների Գահակալ հոգեւոր եղբայրներին, ուխտապահ միաբանութեանը, Նայրենիքում ու հայոց Սփիւռքում հովուական անսակարկ սպասաւորութեան կանչուած առաջնորդ հայրերին ու քահանաներին լինել Տիրոջ այգու արի ու ժրջան մշակներ: Երկնային մեր Վարդապետի խօսքին հաւաքարիմ՝ կենաց ճանապարհով անվարան ու անսայթաք առաջնորդել մեր ժողովրդի զաւակներին՝ «հաւաքովք սրբեալ գսիրպս նոցա»: Նայրենի սրբութիւններով, քրիստոնէական համամարդկային արժէքներով գորացնել ազգային մեր կեանքը, խօսքին համարժէք գործերով բարձրացնել մեր միութեան Տաճարը՝ կենսապտու աիշ առնող Զրիստոսի Աւեփարանից և ներշնչման աղբիւր ունենալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն ու նոյնքան սուրբ Նայրենիքը մեր:

ՆԱՅՐԱՊԵԼՅԱՆ ԱՆՈՒՐԱՆԻ ԿՈՆՂԱԿԻՑ

(5 փետրվարի 2000 թ.)

2000, Բ, էջ 3-9

Երանելի է դարձող, Զորավար, երախտագետ մեր ժողովրդի սիրո խնկարկումով, հաղթանակած հայ զինվորների թների վրա Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարից Նայրոջ Նանրապելութեան ղեկավարութեան ուղեկցութեամբ՝ գլխավորութեամբ Նանրապելութեան նախագահի, Նայրապելիս և զինվորայ միաբանութեանս աղոթքով, հպարտ Եռագույնի ներքո ճանապարհվում ես դեպի բարձունքը անմահների, ուր հայրենաբաղձ, փենչավառ հոգուդ հրճվանքով ընդառաջ են գալիս լոյս հոգիները բոլոր զավակներինդ, որ նոր նահապակներն են վասն Նայրենյաց, վասն հավաքի՝ մարտի ելած նաև քո անվամբ, հայացքի առջև քո թանկ պարկերը՝ կրծքիդ շողացող Սուրբ Լուսավորչի շքանշանով:

«Գործս կիսապ մնաց» խոսքը նոր արժեւորմամբ ու հնչողությամբ վերստին արձագանքում է հայ հոգիներում: Գործիդ շարունակման վկան է այսօրը, որով, խոսքիդ համաձայն, «հավաքով մխրճվում ենք դեպի ապագան»: Այսօր Զորավարիդ աճյունը չէ միայն, որ ամփոփում ենք հայրենի հողում, այլև կոթող ենք կանգնեցնում անթաղ ու անշիրիմ հայրենյաց

պաշարպան բազում հայորդյաց՝ մեր երկրի սրբում ու մեր հոգիներում անթեղելով ձեր սերը առ Հայրենին, ազապարենն ոգին ու հավաքը հայոց գալիքի հանդեպ:

Հաղթապասակ սուրդ, սիրելի Ջորավար, որ բազմիցս շողացել է ազապության ու արդարության հույսի ցուքերով, խաղաղ ու շինարար կյանքի երագի փայլով, թո ամուր ձեռքում դարձել է հրավեր ու կոչ հայոց միության, արարումի իր այս խորհրդով հայոց արևին է պարզվել այսօր երագ թո Հայրենիքում, Սուրբ Էջմիածնում, ուր 80 փարիներ առաջ պարյան դրեցիր ու այն հանձնեցիր լուսահոգի Գևորգ Ե Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Թող շեղբը սրիդ խաղաղության անամա կապույտը անդրադարձնի Մայր Հողին առմիշտ և հերկի հայոց հոգին սրեղծագործ ու հողը պրդաբեր՝ հայորդյաց մրաց ու ձեռքի արգասիքների արևագույնը բազմապարկելով հայրենի երկնքում: Թող լեռնանիստ մեր Հայրենիքի բարձր երկնքից Հույսի, Հավաքի, Միրո լույսերի արտացոլանքով կոչնականջ սուրդ միավորի հայ հոգիները ի սփյուռս աշխարհի:

Թող Ջորավարիդ հոգնաբանջ մարմինն ու անմահ հոգին հանգիստ գրնեն ազապ Հայրենիքի մեր սուրբ հողում, Մասյաց փեշերին հավերժախոս բազմած Սուրբ Էջմիածնի հայցքի առջև՝ Եռաբլուրի փառքի բարձունքին:

ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԱՏՅՈՒՆԻ ԱՌՋԵՎ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԱՍՎԱԾ ԽՈՍՔԻՑ
(20 փետրվարի 2000 թ.)
2000, Բ, Էջ 11

Այսօր մեր ժողովուրդը՝ աշխարհական և հոգևորական դասերով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսեխորան Տաճարից խնկաբույր աղոթքով դեպի Ապարանի հաղթական բարձունքն է ճանապարհում իր գավակին: Երկարամյա հարկադիր բացակայությունից հայրենի փուն դարձավ ազապության և հայոց անկախության ջահակիրներից ևս մեկը՝ իր և իր սերնդակիցների սերը, հաղթելու կամքը, հայոց գալիքի հանդեպ աներկբա հավաքը փոխանցելու մեզ:

Արդարև, կյանքը Ջորավարի վկայություն էր, որ «Բանք միայն դապարկ են, այլ գործ պիտոյ է ընդ բանին»: Վերադարձը նրա թող արթնացնի այս ճշմարտության արժևորումը հայորդյաց հոգիներում: Թող Դրաստրամար Կանայանի և իր զինակիցների անմար հիշատակը հայրենյաց ծառայության բոցավառ ոգով հաղթանակների նոր հավաք պարզևի հայրենաբնակ մեր ժողովուրդին և նորոգի ազգային մեր միաբանությունը ի սփյուռս աշխարհի: Հայրենիքը միշտ կանչում է: Հայրենիքը հավերժական կանչ է: Հայրենիքի ազապության և բարօրության համար նրա մշտավառ սիրով կյանքը գործ դարձրած գավակունք շարունակ վերադառնում են:

Թող Բագումողորմն Աստված հայրենի ազապ հողում, Արագածի սեզ փեշերին, Սուրբ Լուսավորչի աղոթախոս Ամմար Կանթեղի ներքո հանգստություն պարզևի Ջորավարի հոգնած ոսկորներին և միախարություն՝ հայրենակարոտ նրա հոգուն:

ԶՈՐԱՎԱՐ ԴՐԱՍՏԱՄԱՏ ԿԱՆԱՅԱՆԻ ԱՏՅՈՒՆԻ ԱՌՋԵՎ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ԱՍՎԱԾ ԽՈՍՔԻՑ ՀՈԳԵՎԱԳՍՅԱՆ ԿԱՐԳԻ ԺԱՄԱՆԱԿ
(22 մայիսի 2000 թ.)
2000, Ե, Էջ 40

Գարեգին Ա լուսահոգի Ամենայն Հայոց Կաթողիկոսը ապրեց իր ազգի ու Եկեղեցու միասնության երազով, որպես ճշմարիտ հոգևորական՝ իր անձով ու անանձնական գործունեությամբ եկավ մեկ անգամ ես հաստատելու և իմաստավորելու հայ եկեղեցականի կոչումն ու առաքելությունը, բարձրացնելու Հայ Եկեղեցու դերը ազգային կյանքում: Քրիստոնեական հավատքն ու ազգային ապրումը դաշնորեն ու հարազատորեն շաղախված էին իր մեջ որպես կյանք՝ արդյունավորելով իր օրն ու ժամը հոգևոր գործունեության բոլոր հանգրվաններում՝ տեսչություն, առաջնորդություն, թե կաթողիկոսություն: Խոհի ու մտածումի ամբողջության մեջ գեղաճաշակ և շարականաբույր նրա խոսքը արարչագործ ուժականությամբ բացում էր հույսի, հավատի դռները, հայկական կերպ ու դրոշմ, շունչ ու ոգի հաղորդում հայ հավատացյալին:

ԳԱՐԵԳԻՆ ԱՌԱՋԻՆԻ ՎԱԽՃԱՆՄԱՆ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՍՎԱԾ ԽՈՍՔԻՑ
(25 հունիսի 2000 թ.)

2000, Ձ, էջ 4-5

Արդարև, «ձայն փառաբանության ի շրթունս առեալ» կարարեցինք օծումը Մայր Տաճարի խաչերի՝ հավատքով անսասան, որ քառաթև նշանները Աստուծո գործությամբ հանապազ խաղաղություն և օրհնություն են բաշխելու հավատավոր մեր զավակներին՝ վանելով հայրենական մեր կյանքից հոգս ու փրփումություն, անորոշության մեզ ու անվստահություն և ազգային հավաքական մեր ընթացքը հաստատելով սիրտ, բարության ու ճշմարտության ճանապարհներում:

Քրիստոսի կենարար Խաչի վեհալաց բարձրացումով հայոց վանքերի և եկեղեցիների գմբեթներին՝ դարեր ի վեր մահեր ենք ուրնակոխել, հաստատել ապրելու և ստեղծագործելու մեր կամքը արիական: Քրիստոնեական մեր հավատքը ապրել ենք «իբրև զգոյն ի մորթոյ»: Խաչի սրբազան խորհրդով ինքնություն ենք առել, Աստուծո հոյակերպ փաճարներ մարմնավորել հայրենի մեր ոստանի լեռանց լանջերին, Մեսրոպաղոյնում աղոթք հրաշագարդել մագաղաթի սրբախոս էջերում, Խաչով զինավառ գոյապրել ենք:

ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ
ԽԱՉԵՐԻ ՕԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՍՎԱԾ ԽՈՍՔԻՑ

(26 հունիսի 2000 թ.)

2000, Ձ, էջ 17

Անշուշտ մեզ համար էականն ու կարևորը, մեր կյանքի առանցքը աղոթքն է, որը ձևավորում է մեր հավատքը, իմաստավորում ձեռք բերված գիտելիքները: Եթե մենք աղոթքով սնված, աղոթքով պարուրված հավատք ու հավատքի գործեր չունենք, անիմաստ են դառնալու, առ ոչինչ են նկատվելու ուսուցիչներից ստացած կամ աշխատանքով ձեռք բերած մտավոր այն արդյունքները, որոնք ամբարելու ենք այս հաստատությունից ներս: Մեր սպասումն ու մաղթանքն է, որ կյանքը Հոգևոր Ճեմարանում խարսխված լինի աղոթքի վրա, որպեսզի հավատքը դառնա մեր էության շաղախը, որպեսզի Գևորգյան Հոգևոր Ճեմարանի

Մասնաց դիմաց հրաշակերպում խորին խորհուրդը Նայոց Մեծ Դարձի՝ նորոգ հաւարով եւ նորոգ կեանքով այն փոխանցելու նոր սերունդներին: «Այսօր է, գոր արար Տէր, եկայք ցնձացուք եւ ուրախ եղիցուք» (Սղմ. ՃԺԷ 24), «քանզի ի սմա ծագեաց մեզ յոյս ի Նայասւրան աշխարհի»:

ՆԱՅՈՅ ՄԵՇ ԴԱՐՁԻ 1700-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԿՈՆԴԱԿԻՑ

(6 հունվարի 2001 թ.)

2001, Ա, էջ 6-10

Նրաշափառ Իր Յարութեամբ Աստուծոյ Որդին լրումին հասցրեց փրկագործական Իր առաքելութիւնը: Մեղքի դիմաց խաչուեց Ինքն Անմեղութիւնը, որպէսզի յարապեւ նորոգուի Աստուածակերպ պարկերը խաթարուած մեր հոգու: Քրիստոս աշխարհ եկաւ որպէս Սէր ու սէր սերմանեց, ողորմութիւն ուսուցանեց, հաշտութիւն դարձաւ եւ խաղաղութիւն ու կեանք պարգեւեց, քանզի Ինքն իսկ է Յարութիւն եւ կեանք: Արդ, Քրիստոսի խաչով ներուած են մեզ մեր մեղքերը ու Նրա Յարութեամբ՝ լուսաւորուած դէպի Աստուած մեր ճանապարհը:

Միրելի ժողովուրդ հայոց ի սփիւռս աշխարհի. 2000 փարի «Մենք իսկ ականապեւ եղանք Նրա մեծութեանը» (Բ. Պետր. Ա. 16), Նրա ապրող ու ապրեցնող զօրութեանը: 2000 փարի Յարուցեալ Քրիստոս քայլում է մեր հողում, մարմին առնում մեր արարումներում, ազատութեան բաղձանքում, խաղաղութեան երազում, բարիք սրբեղծելու ձգտումներում: Որպէս քրիստոնեայ առաջին պետութիւն եւ ազգ՝ 17 դար մեր ժողովուրդը Յարութեան յոյսը դարձրել է համազգային իր կեանքի փարոսը, Յարութեան յոյսով զինավառ՝ նաւարկել խութերի ու որոգայթների միջով, Յարութեան հաւարով կոփել խաւարը մերժելու, մահեր յաղթելու իր կամքը: 1700 փարի, սիրելիներ մեր, Սուրբ Էջմիածինը Յարուցեալ Փրկչի Էջքի խորհրդով շաղախն է հայոց միաբանութեան:

Ս. ՆԱՐՈՒԹ-ՅԱՆ ՏՈՆԻ ՊԱՅՏԱՄԻՑ

(15 ապրիլի 2001 թ.)

2001, Դ, էջ 4

Սուրբ Էջմիածնի 1700-ամյա Միածնաւէջ Լուսն Խորանի օրհնությունն ենք բերել նահապարկներիդ նշխարներին, Սուրբ Լուսավորչի Կանթեղի յոյսը մշտադոթք: Եկել ենք ուխտի, սրբազան երդման: Եկել ենք ձեր՝ Քրիստոսի խաչակիցներիդ հազարավոր անհայտ անունների հիշատակումով մեր ուխտը առ Աստուած հաստատելու, համազգային մեր միասնականությունը նորոգելու և մեր հավարը գորացնելու արդարության հաղթանակի հանդեպ: Եկել ենք ասելու ձեզ, որ ամեն ապրիլի 24-ի, նաև այսօր, հայ ընտանիքներում զավակներ են ծնվում՝ հայորդիներ ու հայուհիներ, որ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու ավագանում մկրտվում են ձեր անուններով:

ԴԵՐ ԶՈՐՈՒՄ ԱՍՎԱԾ ԽՈՍՔԻՑ

(24 ապրիլի 2001 թ.)

2001, Դ, էջ 11

Մյուսոնը ճշմարիտ կնիքն է մեր հավատի և Սուրբ Հոգու էջքը մեր անձերին, որով Աստվածային շնորհն է բնակվում մեր մեջ՝ սրբագործելով ու շարունակ նորոգելով մեզ: Մյուսոնով սրբված՝ մենք դառնում ենք ժառանգակիցը Քրիստոսի և հանձնառու՝ Բարին ընտրելու, բարիք գործելու, քանզի մյուսոնադրոշմը ցրում է խավարը մեղքի և լուսավորում մեր մեջ Աստվածակերպ անեղծ պատկերը մարդու: Արարչագործ լուսեղեն այս խորհրդով Սուրբ Մյուսոնը ձուլվել է հայ կյանքի բանվածքին, ինչպես գույնը՝ մաշկին: Սրբարար կանաչ Մյուսոնով շաղախված է մեր հող հայրենին՝ նահապականների սուրբ արյան հետ միախառնելով: Մյուսոնով հայ ենք, Մյուսոնով՝ քրիստոնյա: Մյուսոնով «հայր մեր ճանաչեմք զՍուրբ Անտարանն եւ մայր՝ Առաքելական Սուրբ Եկեղեցին»:

Յոթնարկյա շնորհաց Սրբալույս Մյուսոնը, ինչպես 301 թվականին Արածանիի ջրերում շրջան էր գործում նորադարձ մեր ժողովուրդի շուրջ ու կայծկվում խաչանշան երկնառաք լույսերի հետ, 1700 րարի պարույրներ է գործել հայոց կյանքից ներս և միավորել մեզ, զորացրել իբրև հայ քրիստոնյա, սրբությամբ շաղախել ու հավերժին է կամրջել մեր պարամոթյունն ու ներկան, հայոց բոլոր գալիք դարերը:

Տեսնենք նախախնամական փնտրիչությունը մեր կյանքում, որով կանգված ենք լինելու ազգ սուրբ և Աստծո սեփական ժողովուրդ, հրավիրված ենք Մյուսոն կրելու, Մյուսոնով շնորհընկալը լինելու Քրիստոսապարզ և ազատությանը և որդեգրությանը հավիտենական կյանքի: Հիրավի, Աստծո կամքն է առաքելախափար Հայ Եկեղեցու Մյուսոնով մեզ հայ պահել, մահաբեր փորձությունների, ավերների, կորուստների քառուղիներում հարության առաջնորդել, հողմներից աշխարհե աշխարհ սփռված՝ Հայրենիքով և Սուրբ Էջմիածնով մեկ ու միասնական պահպանել: Աստծո խնամադար ներկայության այս գիտակցությամբ ու հավատով ապրենք ու ապրեցնենք մեր սրտերում հայոց Մյուսոնի բազմափայլ խորհուրդը և հեռու լինենք օտարամուր քարոզություններից, օտարացնող ու մոլորեցնող ուղղություններից: Ճանաչենք մեզ որպես Հայ Եկեղեցի, որպեսզի կարողանանք ճիշտ ըմբռնել մեր առաքելությունը՝ իմաստը մեր կյանքի, որպեսզի անսայթաք լինի մեր ուղին և հավեր առաջնորդի դեպի Սուրբ Տաճարն Աստծո:

ԽՈՍՏՔ՝ ԱՍՎԱՏ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԻ ՕՐՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(22 սեպտեմբերի 2001 թ.)

2001, Թ, էջ 18

Աստված կամեցավ, որ հայ ժողովուրդը սրբության փառար կառուցի, երբ 301 թ. հավատի մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսավորչի Աստվածաբան հայացքի առջև լույսերի մեջ իջավ երկնքից Վաղարշապատ մայրաքաղաքում՝ ոսկե մուրճի հարվածով ցույց տալով փնդը իր աղոթքի փան: Մասյաց լանջերից բերված քարերով Միածնաէջ սուրբ վայրում Լուսավորիչ Հայրապետն ու Տրդատ թագավորը կառուցեցին հայոց Ուխտի Խորանը՝ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարը, որպեղից նոր ճառագումով փարածվեց Սուրբ Թաղեռն ու Ս. Բարդուղիմեոս առաքյալների քարոզությամբ Հայաստանում անթեղված Լույսն Անտարանի: Հայոց

երկնքի փակ լույսի աշխարհակ դարձան խաչակիր գմբեթները եկեղեցիների ու համալսարանի լուսավորեցին Նայասարան աշխարհը:

ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ
ՕԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԸՍՎԱԾ ԽՈՍՔԻՑ

(23 սեպտեմբերի 2001 թ.)

2001, Թ, էջ 20

Փառք փանք Բարձրյալին և հոգու մեր աչքերը բացած՝ փեսենք Աստուծոն ներկայությունը մեր կողքին և Նախախնամական փնտրիչությունը Տիրոջ, որով գուգաղիպեցին Նայոց Դարձի 1700-ամյան և Անկախության 10-ամյակը՝ մեզ վերստին ցույց տալով, որ հավատը և լուսավորում մեր Նայրենիքի բարգավաճման, մեր ժողովրդի բարօրության ուղին: Չերկրնչենք ու չփրկարանանք դժվարությունների առջև, «Զի Աստուծոն ընդ մեզ է...»:

Աստուծոն մեզ հետ է, քանզի հակառակ հազարամյակներով չափվող մեր պատմության ընթացքում կրած փորձությունների, մահերի ու կորուստների՝ ապրում է հայությունը իբրև ազգ ու պետություն, իբրև եկեղեցի: Աստուծոն մեզ հետ է, քանզի այսօր էլ համահավաք ազգս հայոց՝ Նայասարան, Արցախ և Սփյուռք՝ իր Սուրբ եկեղեցու ամբողջականությամբ:

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՅԱՍԱՐԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՐՈՆ ԿՈՉԱԿՄԱՆ
1700-ԱՄՅԱԿԻ ԵՎ ՆԱՅԱՍԱՐԱՆԻ ՆԱՐԿԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՄԱՐԱՅՎԱԿԻ
ՎԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԸՍՎԱԾ ԽՈՍՔԻՑ

(21 սեպտեմբերի 2001 թ.)

2001, Թ, էջ 25

Նայարս ենք համայն մեր ժողովրդով, որ արդարության հաղթանակի հավաքը հոգում 1988-ի վճռորոշ օրերին արձագանքեց հերոսական Արցախի ազատության սուրբ կանչին և միասիրտ ու միաբան զինվորագրվեց ազատագրմանը հայոց հինավուրց այն հողակտորի, ուր միշտ արթուն է եղել հայրենյաց սերը և հանուն անկախության պայքարի ոգին: Արդարև, բազում թշնամյաց ուժն է կոտրվել՝ բախվելով Արցախի երկնահայաց լեռներին: Բազում արցախահայոց պանծալի անուններով է հյուսվել մեր Նայրենիքի պաշտպանության փառապատկեր: Արցախյան ազատագրական պայքարը փորձաքար եղավ նաև խորհրդային տերության համար՝ բացահայտելով, որ անհույս է բռնապետության և անաստվածության ուղին: Կեղծ արժեքներ փշրեց ու կոտրեց տապալեց Արցախի արդար պայքարը, և հաղթանակեց արցախցու հավաքավոր հոգին, որով իր լեռներին եկեղեցի, վանք ու խաչքար է կանգնեցրել, սրբեղծել բարիք ու շեն պահել իր փունը և միշտ հավաքարիմ մնացել նախնյաց սրբություններին ու ավանդներին: Աստուծոն օգնությամբ հաղթանակեց մեր ժողովրդի միասնականությունը՝ ինքը գորանալով Արցախով:

Այսօր մենք խոնարհումով ու աղոթքով ենք հիշում հայրենյաց պաշտպան բոլոր քաջորդիներին, ովքեր Վարդանանց օրինակով ապրեցին «հոգին առավել է, քան մարմինը» գիտակցությամբ ու հավատով և իրենց կյանքը նվիրեցին, որպեսզի օր առաջ ծնունդ առնի Արցախի անկախությունը: Սրբոց Վարդանանց շարքում են նրանք, և նրանց հոգիներն այսօր երկնքից նայում են մեզ ու ցնծում մեզ հետ:

Միրելիներ, Բարձրյալի նախախնամական փնտրիչությամբ Արցախի և Նայաստանի Անկախության փաստամյակը փոխախմբում ենք հայոց Մեծ Դարձի 1700-ամյակի խորհրդի ներքո: Նոգենորոգ այդ խորհրդով հուսաված՝ ազատության երկնապարզ կիր իրավունքը պաշտպանած հայությունն այսօր լավատեսությամբ ու վստահությամբ է նայում գալիքին: Առ Աստված ապավինությամբ մենք հավատում ենք ազգային մեր իղձերի իրականացմանը, Նայաստան, Արցախ և Սփյուռք միաբանության արարող ուժին: Եվ թող Տերը աննկուն պահի սիրո և միասնության 88-յան ոգին հայոց մեջ, որով կերտվել է Արցախի անկախությունը, որը երաշխիքն է մեր հաղթանակների:

ԼՂՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 10-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ ԱՍՎԱԾ ԽՈՍՔԻՑ

(2 սեպտեմբերի 2001 թ.)

2001, Թ, էջ 26-27

301 թ. այսօր՝ Արարարի դիմաց հայոց մեծ խոստովանողի՝ Սուրբ Գրիգոր Աստվածաբան Նայրապետի հայացքի առջև իջավ Քրիստոս: Նավարթով բժշկություն գրած Տըրդաթ թագավորի գլխավորությամբ, ազնվագարմ փիկնանց, նախարարների ու զորականների հետ մեր ժողովուրդը այսօր Տաճար կառուցեց Արարարի լանջից բերված քարերով՝ կամարելով Միածնի Էջբի վայրը, որտեղից Ավետարանի Լույսը փարածվեց ու առաքաջավ ողջ Նայաստանում՝ նորոգելով Սուրբ Թադեոս և Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների ձեռքով վառված կանթեղները հավատի: Նորության հավատով իմաստավորվեց հայ ժողովրդի կյանքի ընթացքը: Դարերի մեջ ազատության ու արդարության սերը, խաղաղության ձգտումն ու արարումը եղան հայոց պետության ու հայ ժողովրդի նկարագիրը, զոյության ու հավերժության խորհուրդը: Արդարև, առաքելություն է Սուրբ Էջմիածինը, ինչպես բնորոշել են մեր Նայրապետերը. խավարից դեպի լույս, մահվանից դեպի կյանք առաջնորդող առաքելություն, ամեն հայի հոգում Աստված Էջբը պատկերագրող և այս արժեքով համայն հայոց միավորող առաքելություն:

4-րդ դարից ի վեր այսօր է հաստատվել Ամենայն Հայոց Կաթողիկոսության նստավայրը: Այսօրից են Հայոց Նայրապետները մեր ժողովրդին առաջնորդել դեպի Ավարայր ու Մարդարապար՝ վասն հավատի ու հայրենյաց մարտը մղելու: Այսօրից է երջանկահիշարակ Վազգեն Առաջին Վեհափառ Նայրապետն օրհնել 88-ի մեր ազատամարտը Արցախյան և 91-ի անկախ Հանրապետությունը Հայոց:

2001 թվականին, երբ մեր ժողովուրդը վերստին անկախ Նայաստանում, Արցախում և Սփյուռքում փոխախմբում է իր համազգային մկրտության և Նայաստանում քրիստոնեության պետական կրոն հռչակման 1700-ամյակը, իր սրբությամբ ու նվիրականությամբ, պարմական ու ազգային նշանակությամբ Սուրբ Էջմիածինն է համայն հայոց հոգում և համայն հայոց հոգին է Սուրբ Էջմիածնում, քանզի Սուրբ Էջմիածնով է եղել յուրաքանչյուր հայորդի որդեգիր Աստված:

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

ՎՈՎԱՆՆԵՍ ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ ՈՒՂՂԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԻՑ

(25 սեպտեմբերի 2001 թ.)

2001, Թ, էջ 60-61

Մենք մնում ենք շարունակողը քրիստոնեական Եկեղեցիների համագործակցության ուղղված Մեր նախորդ Նայրապետների բայլերի, քանզի Աստված «Եւ մեզ զպաշտօնն հաշարութեան» (Բ Կորն. Ե 18): Սիրո ու համերաշխության մեջ է մարդկության ապագան: Աղոթենք, որ մեր բոլոր գործերում հաղթանակի Քրիստոսի Մերը: Աղոթենք, որ Ամենախնամ Աստված գորացնի և գորակից լինի մեզ բոլորիս մեր պարպի մեջ և օրհնի բոլոր բարի գործերը՝ ի շահ աշխարհի խաղաղության ու ապահովության, նրա շենացման ու բարօրության:

Աղոթք ենք բարձրացնում առ Աստված քրիստոնեական բոլոր Եկեղեցիների հասարակության, պետությունների ու բոլոր ժողովուրդների համերաշխ փոխհարաբերության համար: Թող առաքելապատիվ Նայոց Սուրբ Գրիգորի բարեխոսությամբ, Նայոց Մեծ Դարձի 1700-ամյակի հոգևորոգ խորհրդով Երևանի Մայր եկեղեցին միշտ լինի սիրո, եղբայրության ու համագործակցության ոգու հանդիպավայր:

Մենք հավարտում ենք, որ երրորդ հազարամյակում իր միասնականությամբ առավել գորավոր է լինելու Քրիստոսի Մեկ, Ընդհանրական, Առաքելական և Սուրբ Եկեղեցին՝ հանուն իր աստվածահասարակ փրկագործական առաքելության:

Ձերդ Սրբություն, գոհունակ սրբով Ձեզ ենք փոխանցում Նոռնում Ձեր կողմից Մեզ հանձնված մեր հավաքի հոր՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի նշխարները, որպեսզի սուրբ մատուցենք Ձեր օրհնությունը բերեք բարեպաշտ ժողովրդին:

Թող Տիրոջ Մերը, Շնորհը և Խաղաղությունը լինի մեզ հետ այսօր և ընդմիշտ. ամեն:

ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ
ՆՈՎՆԱԿԱՆՆԵՍ ՊՈՂՈՍ Բ ՊԵՊԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՈՂՋՈՒՑՆԻ ԽՈՍՔԻՅ

(26 սեպտեմբերի 2001 թ.)

2001, Թ, էջ 66-68

Միածնի Իջման Սուրբ Մեղանի առջև հոգևոր պետերիս և բարեպաշտ մեր հավաքացյալների աղոթքն ու հայրը թող լինի. «Էջ, Միածին»: Իջի՛ր, Միածին, «յերկիր խաղաղութիւն եւ ի մարդիկ հաճութիւն» աշխարհանորոգ Քո ավերիստով, «Եկայք շինեսցուք սուրբ գիտրանն լուսոյ...» Տերունական Քո հրավերով: Իջի՛ր, Միածին, այսօր և միշտ՝ Աստվածաշին Քո աներկբա Սիրով, ու պայծառ պահիր Տաճարն Աստծո մեր հոգիներում, որ Նավապը, Նույսն ու Մերը օրհնությամբ իջնեն համայն աշխարհին, հողին, բարիքին, մարդկանց սրբերին, ձեռաց գործերին: Իջի՛ր, Միածին, և անխռով ու ապահով պահիր քո հոպը բանավոր, ճշմարտության Նոգվով գորացրո՛ւ հոգևոր ու պետական առաջնորդներին, որպեսզի կարարենք մեր պարպը մեր ժողովուրդների, համայն մարդկության և Աստծո առջև: Իջի՛ր, Միածին: Ո՛րհնի՛ր մեր հայցին, Իջի՛ր, Միածին: Քեզ փանթ, պատիվ և իշխանություն այժմ և հավիպյան. ամեն:

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՅՎԱԾ

Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՍՎԱԾ ԽՈՍՔԻՅ

(14 նոյեմբերի 2001 թ.)

2001, Ժ-ԺԱ, էջ 13

Թող հրճվի ձեր հոգին ամեն անգամ, երբ մտնեք այս փառարի դռներից: Երբ վառեք ձեր մոմը, աղոթեք և մաղթեք, որ գա այն օրը, երբ իբրև ուխտավորներ պիտի ծնրադրեք Սուրբ Էջմիածնի դռանը, պիտի վառեք ձեր մոմը Իջման Սուրբ Սեղանի առջև և ի սրբն պիտի հայցեք, որ ամեն հայի պարզևկի ուրախությունը՝ Կեսենլու Արարապը իր վեհության մեջ և Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարը՝ դեպի երկինք խոյացող իր գմբեթով, որ կամարում է Տիրոջ Էջքի Խորհուրդը հավերժահայաց: Սուրբ այդ խորանի առջև պիտի խոնարհվի ձեր նայվածքը, և դուք պիտի վերանորոգեք ձեր ուխտը առ Աստված՝ մնալու հավատարիմ մեր հայրերի երազին, որ է՝ բարգավաճ, շեն ու բարօր և ամբողջական Հայրենիքի մեջ Հայրենյաց սիրով շինել մեր փունը և հարանց հավատով այնտեղ վառել Լուսավորչի անմար Կանթեղը:

ՓԱՐԻՋԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ

ԵԿԵՆՅՅՈՒՄ ԱՍՎԱԾ ԶԱՐՈՉԻՑ

(9 դեկտեմբերի 2001 թ.)

2001, ԺԲ, Էջ 13-14

Այստեղ՝ Արարապի դիմաց, ի տես Սուրբ Գրիգոր Լուսավորչի իջավ Աստվածորդին և հասարապեց Հայոց Բեթղեհեմը, որպեսզի Իջման Սուրբ Սեղանից հանուր հայ կյանքի վրա սփռվեն Բեթղեհեմյան Լույսի սիրո շողերը: Իջավ՝ ոսկե մուրճի կնիքով դրվագելով համազգային մեր դարձի խորհուրդը, որպեսզի Սուրբ Էջմիածնով հարաբերի ժողովուրդը մեր ու միավորյալ մնա՝ թեկուզ մասնավրված ու աշխարհասփյուռ: Իջավ՝ «Դիր ինձ իբրև կնիք քո սրբի վրա և իբրև մաքանի՝ քո ձեռքին, քանզի գորեղ է սերը մահվանից» պարզամով: Եվ դրեցինք սիրո կնիքը մեր սրտերին ու կապեցինք որպես բազալան մեր աջին: Առ Քրիստոս սերը 301 թվականին ընտրյալ դարձրեց ազգիս հայոց, հավատով ու հույսով լցրեց հայ կյանքը, նույնացավ հայ ինքնության հետ, դարձավ ազգը միավորող Եկեղեցու, ազգը պահող Հայրենիքի սեր, անձնագրի նվիրումի ու հավատարմության՝ ընտանիքի սեր: Զորացրեց մեր հոգում արդարի, ճշմարիտի ու կյանքի սերը՝ չարը մերժելու, մահեր հաղթելու: Երկունքով լցրեց հայ հոգու անդասարանները, որ առապարեն պարզաբերեցին՝ միշտ հաղորդ քաղաքակրթության առաջընթացին:

Այսօր հայոց եկեղեցիները Սուրբ Ծննդյան Ավետիսով մեր զավակներին ի Հայաստան, Արցախ և ի Սփյուռս վերստին հրավիրում են Մսուրը Բեթղեհեմի, կոչում Աստվածասիրության, պահանջում եղբայրսիրություն, քանզի առ Աստված և միմյանց նկատմամբ սիրով ենք գորեղ իբրև անհատներ, իբրև ազգ, պետություն ու Սուրբ Եկեղեցի: Չլինի, որ լսենք ու անտարբեր անցնենք, չլինի, որ թերահավատ գրնվենք, չլինի, որ իշխանասիրությունը, շահը, հոգսերը կամ ունայն, անցողիկ պատրանքներն ու մոլորությունները խեղդեն մեր հավատը: Չլինի, որ սերը փկարություն նկատենք և խավարը ավելի սիրենք, քան լույսը:

Արդ, կարարյալ հավատով նայենք դեպի վեր, գրնենք քարայրը բեթղեհեմյան, ճանաչենք խանձարուրում խայտացող Մանկանը, Ով գալիս է բնակվելու մեր մեջ, ազատելու մեզ մեղքից, առաքինությամբ շնորհագարդելու, աներկյուղ ու անդավաճան դարձնելու, Ով գալիս է գորացնելու մարդասիրություն, օրինահարգություն, հայրենասիրություն, սրբեղծագործ

ջիղ ու արարում, որպեսզի Սուրբ Ծննդյան օրհներգը՝ «եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն», մշտապես հնչի աշխարհում համայն ու բազմապարկվի մարդկային հոգիներում:

Աստվածային Սիրո հայտնության, Սիրո հաղթության երգը մեր շուրթին՝ Ամենայն Հայոց Միաձնաէջ Մայր Աթոռից եղբայրական սիրո Մեր ողջունն ենք հղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նվիրապետության Աթոռների Գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին, Երուսաղեմի հայոց Պատրիարք Ամենապարկիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին, Կ. Պոլսո հայոց Պատրիարք Ամենապարկիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանին:

Բարձրյալի օրհնության և գորակցության հայցով Մեր ողջունն ենք հղում Հայաստանի Հանրապետության Նախագահ Տիար Ռոբերտ Զոհարյանին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահ Տիար Արկաղի Ղուկասյանին, ողջունում ենք Հայաստանի և Արցախի ողջ պետական ավագանուն, Հայաստանում հավաքարմագրված դիվանագիտական առաքելությունների ղեկավարներին ու ներկայացուցիչներին:

Տիրոջ Սուրբ Ծննդյան բարի Ավերիսով Հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում մեր Սուրբ Եկեղեցու թեմակալ առաջնորդներին, ուխտապահ հոգևոր ողջ դասին, թեմական և համայնքային վարչական մարմինների պարավարժան անդամներին և համայն մեր հավաքացելոց ի սփյուռս աշխարհի:

Հայցենք միասնաբար, սիրելիներ, փրկարար Կամքն ու Շնորհը Բարձրյալի: Ուր Կամքն Աստված, այնպեղ՝ խորհուրդ մեծ ու սքանչելի և գործ հրաշալի, ուր Շնորհն Աստված, այնպեղ՝ օրհնություն:

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ. մեզ, ձեզ մեծ աւերիս»:

ՍՈՒՐԲ ԾՆՆՆԻՑԱՆ ՊԱՏԳԱՄԻՑ

(6 հունվարի 2002 թ.)

2002, Ա, էջ 3-6

Սիրելի ժողովուրդ հայոց.

Հարության ողջունաբեր առավուր է: «Երկիրը լցվել է Տիրոջ ողորմությամբ» (Սաղմ. ՃԺԸ 64): Հարության ու կյանքի հաղթության հավաքով, հույսով ու լավաբեությունբ են համակված մեր հոգիները՝ հաղորդ «Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը» (Ղով. ԺԴ 4-6) Բանին Կենաց Աստվածհայտնության խոսքին:

Քրիստոսի սքանչելագործ Հարության խորհրդով մենք ապրում ենք այն մխիթարությունը, որ Աստված չթողեց իր արարածներին մեղքի հեղ միայնակ, կորսության ճանապարհին, այլ շարունակ հայտնվեց մարդկությանը նահապետների և մարգարեների միջոցով, իսկ ի լրումն ժամանակի մարմին առավ ու բնակվեց մարդկանց մեջ:

Մեկ այլ աշխարհի՝ խաղաղ ու եղբայրասեր, Աստված հեղ հաշտ՝ փրկված աշխարհի սերը մարդկանց հոգիներում սերմանելու առաքելությամբ եկավ Քրիստոս, եկավ խաչի վրա անարար Իր արյան հեղմամբ մեղքն ու մահը խորտակելու հանձնառությամբ: «Սիրեց յուրայիններին, ... իսպառ սիրեց նրանց» (Ղով. ԺԳ 1), - ասում է առաքյալը: Փրկչի իսպառ

այդ սիրով գծվել է Գողգոթայի խաչելության ուղին և փայլարակել Նարության Լույսը՝ իբրև սիրո ու բարոյի հաղթության ճշմարտություն, իբրև քավություն ու ներում, իբրև հաշտություն:

Այսօր մենք, ում նույնպես խաչառ սիրեց Քրիստոս, կանգնած ենք թափուր գերեզմանի առջև, որի դռնից քարը մեզ համար մի կողմ է գլորված: Գերեզմանից անդին մահվան սրվերից գերծ ճանապարհն է, և Նարուցյալ Քրիստոս ծայնում է մեզ. «Եվ թե ուր եմ գնում, այդ գիտեք, գիտեք և ճանապարհը: ... Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը» (Նովի. ԺԴ 4-6):

Միբելի բարեպաշտ հավաքացյալներ.

Աստուծո Միածին Որդու փրկագործական առաքելությամբ շնորհն ունենք ճշմարտությունը ճանաչելու, գրկելու կյանքի իմաստն ու նպատակը, երջանկության ճանապարհը: Ծրջմարտությունը և կյանքը մեր հոգիներից պիտի բխեն, Քրիստոսին սիրող հոգիներից, որ հավաքում են Նրա Խոսքին՝ Սուրբ Ավետարանին, վստահում Նրա Նարությանը ու Նրա աստվածային ներկայությանը մեր մեջ, կյանքի հավիտենությանը, քրիստոնեական բարոյական արժեքների կենսահաստատու ուժին: Մեր ամեն խոսք և գործ կան վաճառում է ճշմարտությունը, կան հաստատում այն: Կան խոցում է դիմացինի սիրտը, կան ամոքում ու մխիթարում, կան ավերում է, կան կառուցում, կան խավար է ծնում, կան լույս: Չլինենք ճշմարտության վաճառողներ այն զինվորների պես, որ կաշառվեցին ու սուր վկայություն րվեցին, թե աշակերտներն են Կարել Նիսուսի մարմինը, այլ անկաշառ հոգով, արդար սրբորիվ և Նարության անխառն հավաքով մեր Եկեղեցու խորաններում հաղորդվենք Աստուծո Միածին Որդու կենդանարար մարմնին ու արյանը: Ով ճանաչել է ճշմարտությունը, խավարը չի ցանկա: Ով քայլել է ճշմարտության ճանապարհով, խավարում չի դեզերի: Մեր ճանապարհը Նայոց Մի, Առաքելական Սուրբ Եկեղեցին է՝ Նարուցյալ Քրիստոս քարոզող, Նարության հավաքի մեջ, Նարության ճանապարհին մեզ հաստատող ու ապրեցնող:

Միբելի ժողովուրդ հայոց, Նարության նոր արշալույս է բացված ի Նայաստան, հԱրցախ և ի Սփյուռս՝ ներշնչուն նոր կյանքի սպասումով՝ առաքինությամբ շենշող, ապահով, բարօր ու երջանիկ կյանքի: Երբ Նարության նոր առավուր է հայ իրականության մեջ, չերկնչենք մեր Նայրենիքում իրավունք և օրինականություն պաշտպանելու, արդարություն և ճշմարտություն հաստատելու: Դառնանք դեպի Նարության անսրվեր լույսը, բացենք մեր հոգին մեզ նորոգող ու փրկող Նարուցյալ Քրիստոսի առջև: Երբ Նարության նոր առավուր է, ինչպե՛ս լույսամբ անցնենք կեղծիքի կողքով և մեր անարարբերությամբ ու անփութությամբ թույլ փանք, որ մեր կյանքը դառնա կեղծ արժեքների ու գաղափարների, անօրեն գործարքների վաճառարեղի:

Քրիստոնեական բարոյականի վերածնունդը այսօր համազգային խնդիր է և յուրաքանչյուրիս մտահոգության առարկա, քանզի առանց սիրո, առանց ազնվության, արդարամբության ու օրինավորության միայն կարճատև կարող են լինել բոլոր ձեռքբերումներն ու հաջողությունները, փոքրությունը՝ գուրկ ազատ ու ներդաշնակ զարգացումից, գիտությունը՝ հեռու կյանքի առաջընթացին ծառայելու իր կոչումից, արվեստը՝ անհոգի ու միայն նմանակող: Առանց Փրկչի ոչինչ հարապն ու երջանկաբեր չենք կարող սպեղծել: Քրիստոս է ճանապարհը, «աղբյուր կենաց և բաշխող շնորհաց»... ով Ինձ հավաքում է, ինքն էլ կանի այն գործերը, որ Ես եմ անում» (Նովի. ԺԴ 12),- ասում է Տերը: Լավը լավ կոչող, վատը՝

վար, բարին չարից փարբերող գործերն են դրանք, փեսիլթով ներշնչուն արության գործերը, հաղթանակող, հրաշածին, անհնարինը հնարավոր դարձնող ու հարությանը շնչող գործերը:

Փրկչի ուղենշած, Նրա արյամբ հարթված, Նրա սիրով ծաղկուն հարության ճանապարհով պիտի վերածնվի Հայաստանը, ճշմարտությամբ պիտի գործել լինի, լեցուն կյանքով ու երջանկությամբ, երկիր դրախտավայր՝ աշխարհասփյուռ ողջ հայության համար ոչ միայն պարմակալան հայրենիք, այլ փուն հայրական, որ հավաքում է մեզ փապանակիր Արարափի շուրջ, Միաձնակառույց Սուրբ Էջմիածնի հովանու ներքո:

Ս. ՀԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԻՑ

(31 մարտի 2002 թ.)

2002, Բ-Գ, էջ 3-6

Եթե մենք ուզում ենք արդյունավետ՝ ծառայել մեր ազգին, պիտի ունենանք Ղևոնդ Երեցի ոգին, կամքը, հավատքը, նվիրումը, սերը՝ ինչպիսի ժամանակահատվածում էլ որ ապրենք, ինչպիսի դժվարություններ էլ որ ունենանք, ինչպիսի խնդիրներ էլ մեր առջև ծառայած լինեն: Եթե մենք ժողովրդի անձերի մեջ կերպավորողը եղանք Ղևոնդ Երեցի նկարագրի և ոգու, մեր առաքելության մեջ մենք հաջողած ենք, մենք հաջողած ենք իբրև քահանա, մենք հաջողած ենք իբրև Եկեղեցի:

Իր ժողովրդի համար դժվարին պահին, ճակատագրական պահին ինչպես Ղևոնդ Երեցը կանգնեց և հսրակորեն իր դիրքորոշումը արտահայտեց նախ Աստուծո առջև, իր Եկեղեցու առջև, իր հայրերի սուրբ հավատքի առջև կանգնեց և իր հավատարմությունը դրսևորեց և քաջարար ու վստահ իր հավատքը, իր համոզմունքը հնչեցրեց՝ պարտաստ լինելով գիտակցաբար հանձնառություններ վերցնելու, անձնագոհության գնալու, իր կյանքը վրանգի ենթարկելու, ապրելու «Մահ իմացեալ անմահութիւն է» գիտակցությամբ:

ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ՏՈՆԻՆ ԱՍՎԱԾ ԽՈՍԷԻՑ

(5 փետրվարի 2002 թ.)

2002, Բ-Գ, էջ 123

Վարդանանց պատերազմը խղճի ազատության համար մղված առաջին պատերազմն էր ազգերի և պետությունների կյանքում: Եվ ակամայից մտածում են, թե այսօր որքան օտար կազմակերպություններ մուտք են գործել Հայաստան և փորձում են մեր ժողովրդի գիտակցությանը հասցնել խղճի ազատության գաղափարը այն դեպքում, երբ 1551 փարիսներ մեր ժողովուրդը գիտի, թե ինչ է նշանակում ապրել խղճի ազատության համար, որ իր մահով է այդ ազատությունը կռել, կոփել, և այսօր ոչ թե խղճի ազատություն է, որ պահանջում են մեզանից, այլ այդ ազատությունն է, որ ուզում են խլել մեզանից, բայց անվարան է իմ հավատքը, որ մենք պիտի կարողանանք միշտ Վարդանանց հոգին հնչեցնել մեր ժողովրդի գազակաց գիտակցության մեջ, նրանց սրտերում, և ոչ միայն հնչեցնել, այլև կերպել

նրանց էությունը այդ ոգով, մեր ընթացքը դարձնել միշտ հաղթական՝ առ Տեր ունեցած սիրով պայմանավորված:

ՎԱՐԴԱՆԱՆՅ ՏՈՒԻՆ ԱՍՎԱԾ ԽՈՍՔԻՑ

(7 փետրվարի 2002 թ.)

2002, Բ-Գ, էջ 130-131

Նախախնամաբար, Կաթողիկե Սուրբ Էջմիածնի՝ իբրև հայոց Մայր Աթոռ օծումից ուղիղ եօթ հարիւր փարի անց, Նարեկայ վանքի Սուրբ Գրիգոր Վանականի աղօթասաց գրիչը աարքեց «յոզնաթախանձ բանից» անմահ «Մապեանը»:

Մէկ հազարամեակ «Ի խորոց սրբից խօսք ընդ Աստուծոյ» ծովացած հայցով Նարեկայ Սուրբը անվախճան գրոյց է սկսել Աստուծոյ հետ: Մէկ հազարամեակ մարդկային հոգին բուրվառ դարձրած՝ աղօթում է գոջասրբութեամբ, աստուածային սիրոյ ու ողորմութեան անհապնում յոյսով եւ հաւատի անխորտակ շէնքը կառուցելու աննահանջութեամբ. «Եւ սկզբնաւոր ողբերգութեան այսր աղերսանաց՝ զհաւատոցն շինուած կառուցից» (Բան Ժ, ք):

«Մապեանի» փողերից հաւատն է յառնում իբրև բարձրագոյն արժէք, առաքինութեան ակունք ու բարեմասնութեանց չափորոշիչ: Հաւատի Տաճարն է վերակառուցում Նարեկայ Մեծ Վարդապետը, Աստուածապետ Տաճարը հոգու, որի խորանից անմար ճառագում է փրկութեան յոյսի կանթեղը՝ լուսաւորելով մեղքը մերժելու ու դէպի Տէրը ընթանալու ճանապարհը. «Ի՛նչ կայ, արդարեւ, աւելի ջքնաղ, խօսքից, մրքից վեր... քան երկբայութեան թանձր խաւարից Աստուծոյ օգնութեամբ մաքրուած սիրուն այն մեղաւորի, որ խորասուզուել է կործանման վիհի անդունդն անյապակ, բայց ունի նաեւ փրկութեան նշխար... Կարող է յուսալ հասնելու նորէն նախապարգեւեալ փառազարդութեան» (Բան ԺԱ, ա):

Ապախնամ Աստուծոյ մեծագոյն ու անզերագանցելի մարդասիրութեանը, փառաւորելով մարդկութեան փրկութեան համար Աստուածորդու զոհաբերութեան ճշմարտութիւնը, հաւապը՝ «դասակից ու պարտակից» սիրոյ եւ յոյսի, մեղքից ազապում, նորոգում ու վեհացնում է մարդկային հոգիները: Հաւապով սրբեալ ու զօրացեալ հոգին զիպէ բարձրանալ, եթէ գայթել է ու ընկել, ի գօրու է շրջել ժամանակների սխալ ընթացքները, դէպի բարին վերափոխել կեանքը, սրելծագործել յանուն խաղաղութեան ու արդարութեան, շինութեան ու վերածննդի, յանուն երջանկութեան ու կեանքի:

Այսօր, սիրելի ժողովուրդ հայոց, երբ Մայր Տաճարի 1700-ամեայ եւ «Ողբերգութեան Մապեանի» 1000-ամեայ աստուածապետ խորհուրդներով միաւորուել են բեղունութեամբ պսակազարդ 303 եւ 1003 թուականները հայ կեանքի եւ քրիստոնէական մեր ողջ անցեալն ու ներկան, հաւատի նոր ուխտով ի մի գանք Աստուծոյ առաջ իբրև Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի:

Շօգի ու մարմին ամբողջ բուժարար աղօթքով Սուրբ Նարեկացու հետ նայենք հոգուց ներս ու րեսնենք այնպեղ անհասանելի Աստուծոյ անընդմիջելի մերձաւորութիւնը: Հաւապով հաստատենք մեր ընթացքը դէպի ակունքը կեանքի, ակունքը ամենայն բարեաց ու շնորհաց, Աստուծոն ընտրենք մեր բոլոր գործերին զօրակից եւ Սուրբ Նարեկացու հետ բարձունքներն ի վեր աղօթք խնկարկելով՝ հաւապով հայցենք, որ Փրկիչ Տէրը Ամենախնամ ու Փրկագործ Իր Սուրբ Նշանը դրոշմի մեր բոլոր ճանապարհներին:

Թող մեր աղօթքը «փառաբանության վերընծայութեամբ» միախառնուի նարեկեան խօսքով մէկ հազարամեակ հայ հոգուց հնչած բիւր աղօթքներին՝ վերստին ու առմիշտ ճըշմարտելով, որ աղերսական ողբամարտեանի աղօթական ոգով հաւարի շէնքը պիտի կառուցենք: Եւ թող մեր հաւարից ծնուած գործերը ուղղորդեն վերածննդի նոր ճանապարհը հայրենան կեանքի, մեր Հայրենիքի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

ՆԱՐԵԿԻ ԳՐՈՒԹՅԱՆ 1000-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԿՈՆՂԱԿԻՑ

(30 նոյեմբերի 2002 թ.)

2002, ԺԱ-ԺԲ, էջ 3-5

Այսօր, սիրելի ժողովուրդ հայոց, Բերդեհեմյան այրում խանձարուրված Սիրո ակունքից, հավաքի ու հույսի Սիոնի բարձունքներից խաղաղության լույսը իջել ու ամփոփվել է մեր եկեղեցիների կանթեղներում և, ինչպես դարեր շարունակ, բաշխվում է «Խաղաղություն ամենեցուն» մաղթանքով, որպեսզի Տիրոջ խաղաղությունը բնակվի մեր մեջ ու մեր հոգիներից սփռվի ազգային-հասարակական մեր կյանքին ու համայն աշխարհին:

Սուրբ Ծննդյան «յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» ավերիտով Փրկչին ենք քննում այսօր վերստին մեր հողին, մեր կյանքին իջնող, որ հայոց հավերժական Մայր Աթոռով միշտ նորոգ լինի մեր հավաքը և Աստուծապալինության մեր ուխտը:

Աստուծաձեռք հեղ է: Մեզ հեղ է խաղաղության Իր ողջույնով: Այս է մեր հավաքը: Ընդունենք Տերունական ողջույնը, ճշմարտապես սիրենք միմյանց և հաճության ու խաղաղության Տիրոջ կամքը փափագելով՝ ծառայենք մեկմեկու ու միասին՝ մեր Հայրենիքին ու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն: 2003 թվականը դարձնենք նոր հույսերի ու սպասումների, Հայրենիքում ու Սփյուռքում ազգային մեր կյանքի գորացման, մեր հավաքի վկայության նշանակալի մի նոր փարի:

ՍՈՒՐԲ ԾՆՆԻՑԱՆ ՊԱՏԳԱՄԻՑ

(6 հունվարի 2003 թ.)

2003, Ա, էջ 4-5

Աստուծաձեռք մեր հողը, դրեց խարիսխ հաւարի ու կապեց կամար Սրբազան Ուխտի: Աստուծոյ Կամքին խոնարհեալ, Փրկչի Էջքի հաւարը շաղախ դարձրած՝ նորադարձ մեր սուրբ նախնիները հասարակեցին Աթոռն Ամենայն Հայոց Զահանայապետութեան եւ խնդալից փութով ու երկխղածութեամբ 303 թ. կանգնեցրին առաջին շինուածքը Մայր Տաճարի: Կանգնեցրին գմբեթն Աստուածաբնութեան՝ փրկարար ու պահապան խաչը վրան, որ վեր բարձրացաւ դէպի Հայոց աշխարհին բացուած խորանաշաք դռները երկնքի: «Կաթողիկէ մեզ կառուցեալ, անվանելի ի դրանց դժոխոց, իւղովն օժման գեղաւէտեալ Մայր պաշտելի, Սուրբ Էջմիածին» (Պաշտօնաւար Դպիր):

Սուրբ Էջմիածնով Մասեաց սրբորոտի հարթութեան վրայ նոյնացաւ Կամքն Աստուծոյ եւ կամքը հայոց: Նոյեան փապանի դիմաց հանգրուանեց հայ ժողովրդի փրկութեան փապանը՝ Հայաստանեայց Եկեղեցու Միաձուլեալ Մայր Աթոռը, որի մկրտութեան աւագանի միտոնալոյսը հոգեւոր նոր ծնունդ փութեց մեր ժողովրդին եւ դարձաւ նոր աւիշ հին արմա-

փին հայոց՝ բնիկ իր հողում ապրելու և յարապետելու: Քրիստոսադրոշմ մեր հաւապը և նյա-
նացաւ մեր ինքնութեան հետ: Սուրբ Էջմիածինը դարձաւ հոգևոր Հայրենիքը հայոց ու վառ
պահեց հայ կեանքի սէրը և փեսիլը՝ կորցրած անկախ պետականութեան վերականգն-
ման: Պարմութեան դժուարին ուրախներում ու փորձութիւնների մէջ Մայր Աթոռից բաշխ-
ւող սէրը և փրկութեան հաւապը յուսադրեցին ու զօրացրին հայ հոգիները, համախումբ
միաբան պահեցին հայոց փոքր անուն, որի գոյութիւնը դարերով վրանգուած էր թէ՛ բռնա-
գրաւուած Հայրենիքում, թէ՛ նրանից հեռու, օտար ափերում: Որքան մեծ եղան աղէտները,
այնքան առաւել զգալի եղաւ Սուրբ Էջմիածնի պահապան զօրութիւնը: Որքան հեռուները
սփռուեցինք, այնքան առաւել փեսանելի եղաւ ու ջերմացրեց մեզ Իջման Սուրբ Սեղանից
ճառագող լոյսը, որ Աստուծոյ Էջքի փեսիլով վերածննդի նոր հաւապ, կամբ ու ձգտում յա-
ւելեց մեր ժողովրդին: Սուրբ Էջմիածնի Շողակաթ լոյսն է հայոց բոլոր եկեղեցիների կան-
թեղներում և Լուսատրջի Սուրբ Միտոնը՝ մկրտութեան աւազաններում, որ բաշխում են
շնորհը հայրենեաց ժառանգութեան որդեգրութեան: Ամեն հայի համար անվերապահ միե-
ղէն սրբութիւն է Սուրբ Էջմիածինը, հայ ու քրիստոնեայ ապրումի պարունակը. «Այս փա-
ճարի մէջ է հայի ազգութեան սիրտը՝ Իջման փեղը. սիրիի Էջմիածինը, ներս մտիր, համբու-
րիր Իջման փեղը ու դու համբուրած կլինես փեղերքի վրա փարագիր ցրուած ամբողջ
ազգ» (*Պերն Պոռեան*): Այսպէս գիտենք Սուրբ Էջմիածինը և այսպէս ենք ճանաչեցրել
այլոց: 17 դար գիտենք հայ հոգու զօրութեան ակունք ու զանճարան, ազգութեան սէր ու
դրօշ, հայ հոգու պարճանք ու յաղթութիւն, գիտենք մեզ Մայր պաշտելի՝ գորովագութ սի-
րով մեզ շաղկապող, սիրոյ մէջ հաստատող ու պահպանող: Սուրբ Էջմիածնի ոգու ճնունը
են Մաշտոցն ու թարգմանչաց դասը, Ոսկէ, Արծաթ և հանճարածնունդ բոլոր դարերը
հայոց, Վարդանն ու մեր պարմութեան բոլոր Վարդանանք, Աարայրն ու մեր բոլոր գոյա-
մարտ Աարայրները, հայոց անկախութեան նոր այգաբացը լուսաւորած Մարդարապարն
ու Արցախեան ազգաբանարտը: Այս ըմբռնումով մեր հայրերը շարունակ նորոգել ու բարե-
գարդել են Մայր Տաճարը հայոց, հրաշալի փեսիլի նմանութեամբ գեղեցկադիր շինուած-
քով պահպանել ժամանակի աւերից հողմերին յանդիման: Սուրբ Էջմիածնից հեռու Հայոց
Հայրապետները, ինչպէս Սուրբ Ներսէս Շնորհալին, իրենց զգացել են փարագիր ու ան-
մխիթար, քանզի հայ հոգին իր հաւապի օրրան, իր յարապետութեան խորհուրդ ու կեանքի
քաջալերութիւն, իր Մայր Աթոռը ճանաչել է միշտ հայրենեաց հողին երկնքից իջած Սուրբ
Էջմիածինը. «*Ի վերայ Աջոյն և Մորոյ Էջմիածնի աննկայն ազգն Հայոց կապեալ կան*»:

Նախախնամութեան Կամքով 1441 թ. Հայրապետական Աթոռը, երկարապետ դեգերում-
ներից յետոյ, վերահաստատուեց Միածնաէջ իր փեղում՝ ժամանակի նոր փորձութիւնների
մէջ հաւաք ու յուսացեալ պահպանելու իր հօփը և հովուելու դէպի յոյսի ու յաղթութեան նոր
եզերքներ:

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՕԾՄԱՆ
1700-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԿՈՆԴԱԿԻՑ

(30 հունվարի 2003 թ.)

2003, Բ, էջ 4-5

Այսօր քիչ չեն հայ եկեղեցու առջև կանգնած մարտահրավերները: Մեր ճանապարհին երբեմն փկարանում ենք, երբեմն մեր հոգսերն են խանգարում մեզ, սակայն մեզ համար օրինակ են Ղևոնդյանց բախանայք, ուժեր ավելին չունեին, քան մենք: Եթե մենք ուզենք, Ղևոնդյանց ոգին միշտ պիտի օգնի ու գորացնի մեզ հոգևոր մեր կոչման ու ծառայության ճանապարհին: Հնչեցնենք մեր հոգիներում Վարդանանց ու Ղևոնդյանց ոգին, ապրենք վասն Հիսուսի, վասն հայրենյաց նույն սիրով ու նվիրումով, և դժվարությունները կնահանջեն, մենք չենք սխալվի մեր որոշումներում, և մեր առաքելությունը ուրախընթաց ու արգասաբեր կլինի մեր ժողովրդի կյանքում, ազատ մեր հայրենիքի վերակառուցման, հոգևոր զարթոնքի ճանապարհին, երբ ձեռք ենք բերել հաղթանակներ:

ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ՏՈՆԻՆ ԱՍՎԱԾ ԽՈՍՔԻՑ

(25 փետրվարի 2003 թ.)

2003, Բ, էջ 106

Առաքելական քարոզությամբ մեր հայրերը ճանաչեցին ու սիրեցին Փրկչին: Հավատացին, որ Հարության հույսը և գորությունը խոստացված է նաև փոքր ածու մեր ժողովրդին, որ Փրկիչը մեզ է ուղղել Իր խոստումը, երբ ասաց Իր աշակերտներին. «Մի՛ երկնջիր, հօր փոքրիկ, զի հաճեցաւ հայր ձեր փալ ձեզ զարթայութիւն»: Տիրոջ խոսքի վստահությամբ ապրեցինք, դիմագրավեցինք մեզ բաժին ընկած անհամար ցավերի, կյանքով հաղթեցինք մահվան ճանապարհներին: Հարության պարկերը կրող մեր հոգին դրոշմվեց մեր հողին, մեր քարերին ու վանքերին, մաքրաններին ու երգերին, և երբեք չդադարեց Տիրոջ փառաբանության օրհներգը մեր շուրթերին: Արդարև, փառք և գոհություն Երկնավորին, որ փրկարար Իր Խաչով մեզ պարզեց հաղթական հոգևոր մեր գեները՝ Լուսավորչի Սուրբ հավատքը, նույն գորության նոր զարթոնքով կապում է մեզ մեր ավերյալ երկրին ու նրա սրբում կանգնած Սրբություն Սրբոց Միաձնաէջ Տաճարին:

Սիրելի ժողովուրդ հայոց, խաչելության մեր երկար ճանապարհներն ավարտվել են Հարության առավոտով, և Հարության հույսի նոր լուսաբաց է ազատ մեր հայրենիքում ու ազգային կյանքում: Զարկական այս առավոտ, երբ երկինք նայելով բացված ենք Կրեմլում Աստուծո ռոզմության դռները մեր առջև, հարուցյալ կյանքի նոր հրավեր է հնչում մեզ՝ հավատով գորացնելու մեր անհավական կյանքը և վերակառուցելու հավաքական մեր կյանքը: Դժվարություններ ունենք, պիտի ունենանք նաև դրանք հաղթահարելու ուժն ու գորությունը: Նայենք խաչքար դարձած մեր ժայռերին, երկնահայաց գմբեթներին հայոց եկեղեցիների, և նրանք պիտի խոսեն մեզ մեր հայրերի շուրթերով, պիտի խոսեն ու պարզամեն միասնական լինել հայրենիքի ազատության սիրո և Սուրբ Խաչի ամենագոր թևերի ներքո, և մեր միաբանությունը պիտի լինի մեր գորությունը: Անկախացյալ հայաստանն ու Արցախն այսօր ամենից առավել խաղաղության կտրիքն ունեն, կարիքն ունեն մեր նվիրումի ու անձնուրաց ջանքերի: Մեր փունը, մեր գյուղն ու քաղաքը, մեր եկեղեցիները մեր հողի վրա բարձրացնենք ոչ միայն հայրենի լեռներից բերված քարերով, այլև մեր սրբերի մեջ բնակվող Աստուծո սիրով, մեր հայրերի ավանդից ու մեր պատմությունից առած ներշնչանքով: Մեր ավերի մեջ պիտի գորանա մեր հայրենին ու դառնա երկիրը իրականացած մեր հույ-

սերի: Ամեն բարի լույսի հետ օրինենք սկիզբ առնող ամեն օրը ազատ մեր կյանքի, օրինենք հավաքով ու հավաքարժույթամբ և մեր զարթոնյալ հոգու վստահությամբ կառուցենք հայոց բարօր ներկան ու գալիքի փեսիկը, որ լույս է առնում Լուսավորչի անմար Կանթեղից:

Ս. ՆԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏԳԱՄԻՑ

(20 ապրիլի 2003 թ.)

2003, Գ-Դ, էջ 3-4

Բազմադարյա մեր պարտության մեջ հոգևոր, բարոյական և ազգային արժեքներ հաստատելու բացառիկ առաքելություն են իրականացրել հայ կանայք և մայրական գթառատ սրբի ջերմությամբ լցրել հայ կյանքը՝ Սուրբ Մարիամ Աստվածածինն ունենալով որպես ներշնչող օրինակ: Մայրական կոչումն ու առաքելությունն անպարագրելի է ընդհանրական հարկից ներս, քանզի, ինչպես ճշմարտորեն ասված է՝ «մայրերի ափի մեջ պիտի փնտրել ազգերի ճակատագիրը»:

Միրելիներ, փոռական այս օրը Նայրապետիս աղոթքն ու բարի մաղթանքն է, որ Սուրբ Մարիամ Աստվածածնի ու մերազնյա բոլոր սրբուհիների բարեխոսությամբ Աստվածային օրհնությունը միշտ օգնական լինի ու զորացնի Ձեզ, պարզևի երջանկություն, քաջատողջ կենաց հուսառատ ու բերկրալի բազում օրեր:

ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԻ ԽՈՍՔԻՑ

(7 ապրիլի 2003 թ.)

2003, Գ-Դ, էջ 37

Օրենքը արդարության և իրավունքի հաստատման հասարակական ձգտումն է և, արդարև, «օրենքը սուրբ է», ինչպես ասում է առաքյալը (Ղոմ. Է 12): Սուրբ է օրենքը, երբ նրանով իսկապես հաստատվում ենք արդարություն և իրավունք, երբ օրենքներ սահմանելիս և օրենքները գործողության ճամփելիս առաջնորդվում ենք մարդու ու հասարակաց համընդհանուր շահի անհրաժեշտություններով:

Օրենքներով կարգավորվում է մեր կյանքը՝ ընդհանրից մինչև ներպետական ու միջպետական հարաբերություններ, հետևաբար օրենսդրությունը, իբրև արտահայտություն հասարակական շահի մեր իրական մտահոգության, պետք է խարսխված լինի ազգային մեր ավանդներին, քրիստոնեական բարոյական մեր սկզբունքներին ու արժեքներին, քանզի օրենքները միաժամանակ հասարակական մտածողություն են կրթում, դիմագիծ հավելում մեր ազգային նկարագրին: Մեր ժողովրդի մշակութային հարուստ ժառանգության կարևոր մաս են կազմում կանոնաց ու օրինաց ժողովածուները, որոնցով պետականության կորստի պայմաններում անգամ հավաք է մնացել հայրենական մեր կյանքը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԵՐՐՈՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻՍՏԻՆ ԱՍՎԱԾ ԽՈՍՔԻՑ

(12 հունիսի 2003 թ.)

2003, Զ, էջ 3-4

Մեր սիրասուն զավակներ,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում ձեզ Երեւանի օրհնության օրվա առիթով, որը լուսավոր ու պայծառ է ծաղկազարդի Տերունական փոսի հոգեւորոգ խորհրդով:

Ինչպես ժողովուրդն ընդառաջ ելավ ու ողջունեց հիսուսին կանաչ ճյուղերով, նույնպես այսօր դուք ձեր ծնողների ու հարազատների հետ ծաղկած ճյուղեր առած, գվարթ հոգով և աղոթքը ձեր շուրթին գնում եք եկեղեցիներ՝ սրանալու օրհնությունը «Քրիստոսի» մեր Փրկչի ու Տիրոջ:

Արդարև, մեր Տերը շար է սիրում երեխաներին: Աստուծո առջև գնահատելի մեծ գանձ են մանկական հոգու անմեղությունն ու բարությունը: Սուրբ Ավետարանի պարմությանց մեջ հիսուս հաճախ է պատվիրում մեծերին՝ լինել մանուկների նման, որպեսզի աշխարհում առաջնան մաքուր հոգու բարի արգասիքները: Ձեր կյանքի բոլոր օրերում հավաքացեք ու վստահեք Աստուծուն, հավաքարհմ եղեք աստվածաբար պատվիրաններին, բազմաքրեք ձեր հոգու գանձերը, և երկնային շնորհները միշտ ուղեկից կլինեն ձեզ, ու ձեր ընթացքը՝ անսայթաք:

Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ համայն մեր ժողովուրդը՝ մեծ ու մանուկ, միշտ բանուկ պահեն դեպի մեր սուրբ փառարները փանող ճանապարհները, միշտ նորոգ ու գորացյալ՝ մեր հայրերի սուրբ հավաքն ու ավանդները, և հայոց հողից ու հայ հոգիներից աղոթքը անդադար բարձրանա երկինք:

Սիրելի զավակներ, թող Բարին Աստված միշտ ձեզ հետ լինի, ձեր ծնողաց ու հարազատների հետ պահի ու պահպանի ձեզ Իր ամենախնամ Աջի հովանու ներքո այսօր և միշտ: Ամեն:

ԾԱՂԿԱԶԱՐԻ ՏՈՆԻՆ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ

ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ ԱՍՎԱԾ ԽՈՍՔԻՑ

(4 ապրիլի 2004 թ.)

2004, Դ, էջ 25

Աղօթքով և խորին ակնածանքի ու խոնարհումի գգացումով մեր ժողովուրդը փաստանեակ առաջ հրաժեշտ փունց երջանկայիշարակ Վազգէն Ա Ամենայն հայոց Կաթողիկոսին՝ ամփոփելով նրա մարմինը աստուածաբան հովանու ներքոյ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի: Լոյս յիշարակի առջեւ նրախարածան հայրապետի, սիրելի Վեհափառի՝ նրա մահուան 10-րդ փարեկիցին, Մեր հոգում վերստին իր ողջ վեհութեամբ յառնում է նրա մարդկային և հայրապետական մեծութեան կերպարը:

Չորս փաստանեակ աչալուրջ հովուեց իր հօրը շնորհազարդ հայրապետը՝ Սուրբ Էջմիածնից հայեացքը յառած դէպի հեռուն գնացող գալիքները, դէպի պայծառ հորիզոնները հայ ժողովրդի և նոր արշալոյսը հայ Եկեղեցու: Հովուեց մի ժամանակաշրջանում, երբ Սուրբ Էջմիածինը չունէր ամբողջ ազատութիւնը իրականացնելու համար իր առաքելութիւնը հայրենիքում և աշխարհով սփռուած իր ժողովրդի կեանքում: Սուրբ Էջմիածինը գործելու

ազգայութիւնը չունէր, բայց ունեցաւ իմաստուն ու քաջարի Ասորւածարեալ Գահակալ, ով անվարան հաւարով կանգնած հասարակութիւնը վեճին Նայ Եկեղեցու եւ հաւարարիմ աւանդներին հայոց մեծագործ Նայրապետների, կարող եղաւ գորացնել ու բարձրացնել մեր Եկեղեցին:

Մայր Տաճարի հովանու ներքոյ, շարքում Ամենայն Նայոց երանաշնորհ Նայրապետների, հանգչում է Նայոց 130-րդ Նայրապետը, սիրելի Նայրապետը մեր ողջ ժողովրդի համար: Մենք նոյնպէս երջանկութիւնն ենք ունեցել հոգեւոր մեր կրթութիւնը ստանալու Վազգէն Ա Նայրապետի հայեացքի ներքոյ, զգալու նրա հայրական հոգածու ձեռքի ջերմութիւնը, փսնելու ազնուասիրտ եւ արդարամիտ հոգու շռայլութիւնը: Մենք, ինչպէս եւ Նայ Եկեղեցու անդամաբանում այսօր իրենց ծառայութիւնը իրականացնող բազմաթիւ եկեղեցականներ, ովքեր հոգեւորականի իրենց առաջին քայլերն են սկսել Վազգէն Ա Կաթողիկոսի առաջնորդութեամբ եւ ծառայակից ու գործակից դարձել սիրելի Վեհափառին, ականապետն ենք նաեւ նրա ամենամեծ նախանձախնդրութեանը Սուրբ Էջմիածնի առաքելութեան հանդէպ եւ յանրժազնաց այդ առաքելութեանը ամբողջական, անսանձական սիրով նուիրումին:

ՎԱԶԳԵՆ ԱՌԱԶՋԻՆԻ ՎԱՆՃԱՆՄԱՆ

10-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԿՈՆՂԱԿԻՑ

(18 օգոստոսի 2004 թ.)

2004, Է-Ը, էջ 3-5

Սուրբ Մեսրոպ Մաշտոց Վարդապետի անունը կրող Մարենաղարանը ազգային մեր նուիրական հասարակութիւններից է, գանձարան՝ մեր նախնիներից աւանդուած բազմադարեայ ժառանգութեան: Արդարեւ, անհնար է ճանաչել հայ ժողովրդին առանց ձեռագիր մատենաների, ծաղկած յիշարակարանների եւ վաղ փրկագրութիւնների, որոնցում իր ամենապայծառ արտայայտութիւնն է գրել հայութեան հոգին: Գիրքը մեր հաւարի անբաժան մասն է, անբաժան մասն է առ Նայրենին մեր նուիրումի ու սիրոյ, ճանաչողութեան ու արարումի ոգու, որը Անտարանի լոյսով բացուեց ու փթթեց ու պտուղներ փոսեց անմահ:

Մարենաղարանը պիտի պահպանենք իբրեւ հոգու սրբազան փաճար, գիտութեան ու արուեստի լուսեղէն կաճառ՝ միշտ մնալով շարունակողները մեր նախնիների իմաստասէր վարքի: «Զի ուր գանձք ձեր են, անդ եւ սիրտք ձեր եղիցին», - ասում է Քրիստոս՝ մեր Փրկիչն ու Տէրը: Մեր գանձերը կշարունակեն ապրել, կշարունակեն իրենց առաքելութիւնը, քանի դեռ մենք նրանց հնաբոյր, բազմախօս էջերում կփնտրենք մեր հոգին ու էութիւնը, մնալով նաեւ շարունակողները մեր նախնիների նուիրումի ու նախանձախնդրութեան, որով վանքերում՝ գրչութեան կենտրոններում գրքեր հաւաքեցին եւ ընդօրինակեցին ու մարենաղարաններ կազմեցին:

Սուրբ Սահակ Պարթեւ Նայրապետի եւ Սուրբ Մեսրոպ Մաշտոց մեր մեծ Ուսուցիչների ինձամքով ծնունդ առնելով՝ փասնհինգ հարիւրամեակ Մայր Աթոռի հովանու ներքոյ պահպանուեց ու հարստացուեց Սուրբ Էջմիածնի Մարենաղարանը: Այդ հարուստ ու անզնա-

հարելի հաաբաժուի ժառանգորդն է ախօր Երեանի Մաբենաղարանը՝ աւելի քան կես դար գործելով իբրև պերական գիտական հասարապութիւն եւ շարունակելով լինել մեր ժողովրդի հապարպութեան ու հոգաժութեան առարկան:

Մաբենաղարանը, սիրելիներ, պիտի շարունակի մնալ համագգային մեր սիրոյ եւ ուշադրութեան կենտրոնում, որպէսզի մեր անգնահապելի արժէքները ամբողջութեամբ ու լիարժէքօրէն ուսումնասիրուեն, մապուցուեն ու ճանաչելի դառնան մեզ եւ միւս ժողովուրդներին, շարունակելով լոյս սփռել՝ իմացութեան, հաապի, սիրոյ ու նուիրումի: Գանձեր ունենք Մաբենաղարանում ամբարուած, ուրեմն՝ թող այնտեղ լինեն նաեւ մեր սրտերը:

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀԻՄՆԱՄԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԿՈՆԴԱԿԻՑ

(3 սեպտեմբերի 2004 թ.)

2004, Թ-Ժ, էջ 9-11